ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2020 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ», «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ», «ՅՈՒՔՈՄ», «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ, «ՔՐՈՍՍՆԵԹ», «ԱՅԹԵՐ», «ՋԻԹԵԼ», «ԱՐՓԻՆԵՏ», «ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱԼԻՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԵՎ «ՀԱՅ-ԹԵՔ ԳԵԹՎԵՅ, ԻՆՔ.» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №531Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի հունիսի 26-ի №№237Ա-247Ա որոշումներով «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան», «ՅՈՒՔՈՄ», «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական, «ՔՐՈՍՍՆԵԹ», «ԱՅԹԵՐ», «ՋԻԹԵԼ», «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐ», «ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱԼԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ և «ՀԱՅ-ԹԵՔ ԳԵԹՎԵՅ, ԻՆՔ.» ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ) ճանաչվել են իրենց հանրային ամրակցված հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ,

բ) «ԱՐՓԻՆԵՏ» և «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերակազմակերպմամբ վերջինս միացել է «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որի արդյունքում «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեությունը դադարեցվել է, և «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանում է «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդը,

գ) Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի №473Ն որոշմամբ հաստատված՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման մեթոդիկան սահմանում է Հանձնաժողովի կողմից անհատական հանրային ամրակցված կամ շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման կարգը (այդ թվում՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների սահմանման բանաձևը), որի համաձայն՝ նշված վճարների հաշվարկման համար անհրաժեշտ միջազգային համեմատելի ցուցանիշների տվյալների հավաքագրման համար հիմք է ընդունվում տվյալ տարվան նախորդող տարվա երկրորդ կիսամյակում էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) կողմից հրապարակվող՝ հրապարակման տարվա հունվարի 1-ի դրությամբ եվրոպական երկրներում փոխկապակցման վերջնավորման վճարների վերաբերյալ պաշտոնական զեկույցը,

դ) էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) կողմից հրապարակված՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ եվրոպական երկրներում փոխկապակցման վերջնավորման վճարների վերաբերյալ պաշտոնական զեկույցի համաձայն՝ «զուտ ներքևից դեպի վեր երկարաժամկետ հավելյալ ծախսերի հաշվարկման» (Pure BU-LRIC) մեթոդով փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարներ կիրառող եվրոպական երկրների (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Չեխիա, Դանիա, Գերմանիա, Հունաստան, Իսպանիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Հյուսիսային Մակեդոնիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Ռումինիա, Շվեդիա, Սլովենիա, Սլովակիա, Միացյալ Թագավորություն) ամրակցված կապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների պարզ միջին մեծությունը կազմում է 0,1 եվրոցենտ/րոպե,

ե) 2020 թվականի հուլիսի 15-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված 1 եվրոյի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունը կազմում է 553,64 դրամ,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» և 2-րդ կետի «է» ենթակետերը, 37-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ, 7-րդ կետերը և 7-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարը սահմանել 0,55 դրամ/րոպե (առանց ավելացված արժեքի հարկի)։
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված առավելագույն վճարից ցածր վճար կիրառելու դեպքում Ընկերությունները ապահովում են դրանց համաչափ (միևնույն վճար) և ոչ խտրական կիրառումը իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ցանցերի հետ փոխկապակցված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի նկատմամբ։
3. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան», «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական, «ՅՈՒՔՈՄ», «ՔՐՈՍՍՆԵԹ», «ԱՅԹԵՐ», «ՋԻԹԵԼ», «ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐ», «ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱԼԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ և «ՀԱՅ-ԹԵՔ ԳԵԹՎԵՅ, ԻՆՔ.» ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարը սահմանելու մասին» №531Ա որոշումը։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2020թ.